Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. դեկտեմբերի 28-ի N 476- Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՀԿԽԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

1	2	3
1.	Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակի ծառայությունների մատուցման կենտրոնի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ ՀԿԽԸ շահառուներին մատուցվող ծառայությունների բարելավված միջավայրի ստեղծման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ), Ավստրիական կարմիր խաչ, Իտալական կարմիր Խաչ, Իսլանդական կարմիր խաչ, Իսպանական կարմիր խաչ, Գերմանական կարմիր խաչ, Դանիական կարմիր խաչ
4.	Ծրագրի կատարողը	Հայկական կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	քաղ. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պարոնյան 21/1, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	26 413 186 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայկական կարմիր խաչի ընկերության սոցիալ-հոգեբանական, առաջին օգնության, բնակչության տեղաշարժի, երիտասարդական ուղղությունների և այլ ծրագրերի շրջանակներում ընդգրկվածշահառուները:

1	2	3
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.08.2018թ-31.01.2019թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայկական կարմիր խաչի ընկերության Պարոնյան 21/1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի ծառայությունների մատուցման կենտրոնի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված է 01.08.2018 թ. մինչև 31.01.2019 թ. ընկած ժամանակահատված և 26 413 186 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայկական կարմիր խաչի ընկերության Պարոնյան 21/1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի ծառայությունների մատուցման կենտրոնի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված են 26 413 186 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության: Նախագիծը ենթարկվելու է փորձաքննության, իրականացվելու է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև հեղինակային հսկողություն: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին սահմանված կարգով ներկայացվելու են հաշվետվություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ